



ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Հին դար ողջոյն Հայ ազգը հեծեց գե-
րուծեան շրժայներու մէջ պրկուած: Իբրեւ
Ազգ, կորուսեր էինք մեր ազատութիւնը.
ազատութեան հետ նաեւ մեր Հայրենիքը:
Բարբարոս ժողովուրդ մը, բնական օրէն-
քին անգիտակ, անլնդունակ մարդկային
եւ ընկերահաշտ իրաւունքներին, միայն
բիրտ ուժի գործադրութեամբ ընկճեց,
աւերեց ամենայն կարգ եւ կանոն, եւ դար-
ձուց զմեզ իրաւագուրկ էակներ, սորուկներ,
անպատասանատու եւ վայրենի իշխանու-
թեան մը, որ երկրի քացարձակ տէրն կը
համարուէր: Մեզի Հայերիս, այդ դժոխային
կացութեան մէջ, անկարելի էր այնուհետեւ
կազմել համարիւն ընկերութիւն մը, ձեւացը-
նել քաղաքական մարմին մը, որ սեփական
իշխանութեամբ կարենար վանել չարը, ար-
տաքսել թշնամին հայրենի սահմաններէն
դուրս, եւ ստեղծել ապահով եւ խաղաղ
կեանք Հայ ժողովրդի համար: Թերեւս դեռ
երկար լինէր մեր տառապանաց օրերն, ե-
թէ *Էրջանիկ* Համաշխարհական պատե-

րազմն՝ Դաշնակից ազգերու բարեբախտ
յաղթութեամբ, չհամէր վերջ դնելու ա-
մեն տեսակի եւ հաճի բռնակալ, ինքնակալ
Պետութեանց եւ իշխանութեանց, յորս գե-
րածայրեան էր թուրքիան:

Եթէ Պարսիսու խաղաղութեան վեհաժո-
ղովն արդարացնէ իրեն վրայ դրուած ա-
մենայն ազանց յոյսերն, Սիբիլսի խոստա-
ցած ոսկեղարն պիտի սկսի իւր շրջանն
երկրիս վրայ: Այնուհետեւ թէ՛ մեծ եւ թէ՛
փոքր ազգեր պիտի վայելին անպայման ա-
զատութիւն, եւ ամոնց իրաւունքներն եւ
հայրենիքն պիտի մնան եւ յարատեւեն ան-
ձեռնմխելի եւ անբռնաբարելի՝ ապագայ
բռնակալներու անպագ, անսանձ եւ բացար-
ձակ քմահանցքէն: Համաշխարհի ընկե-
րահաշտ դաշնակցութիւնն մեր առջեւը պի-
տի բանայ լեւեւեան դաշտերն:

Մենք ալ յուսացինք եւ կը յուսանք, որ
վերականգնի Միացեալ Անկախ Հայաստան
մը, որով մենք Հայերս ալ կազմենք մի Ազգ
կամ Պետութիւն, մի քաղաքական մարմին

այն հողին վրայ, որոյ սահմաններն զօժեր են տոհմային եւ օտար պատմութիւններն եւ Հայն կոչեր է իւր բնիկ աշխարհն: Այնուհետեւ Հայ ազգն ալ հաւասար իրաւունքներով պիտի մտնէ ընդ համուր ազգաց ընկերակցութեան մէջ:

Թէպէտ մինչ Հայերս գիտակից ենք մեր իրաւանց եւ արդար պահանջներու, թէ մեր բնաշխարհն է Հին Հայաստանն, իւր քաղաքական եւ բնական սահմաններու մէջ, երբ ազատ էր մեր հայրենիքը եւ ունէր իր սեփական օրէնքներն եւ թագաւորական իշխանութիւնն, ՍԱՀՄԱՆԵՐ կ'լսենք, զորս ընդունել են եւ յարգել մեզի ժամանակակից հին ազգեր ֆիյոնք, Հռովմայեցիք եւ Պարսիկք, այնու համար թո՛ղ որ երկար ժամանակ Հայաստանն հպատակել է անոնց գերիշխանութեան՝, սակայն այսօր ստիպուած ենք օտար եւ խառնածին ցեղերու դէմ կռիւ մղել, կրկին անգամ հաւաստելու թէ մինչեւ ուր կը ձգուին մեր սահմաններն, եւ թէ ըստ արդարութեան պէտք է ազատել բարբարոս բռնաւորաց ձեռքէն եւ յանձնել իւր բնիկ տերսնց:

Բայց մեր տոհմային գիտութիւնն եւ ազգային նուիրագործութեամբ իրաւունքներն ոչ թէ իբրեւ վճռական պահանջ մը կ'ուզուի խաղաղութեան վիճաբողոքի առջեւ ընդունիլ, այլ իբրեւ ուղիւ եւ բացորոշ դիւրացուցիչ ճանապարհ մը մատնանշել, զոր, Հայաստանի սահմաններն ուսումնասիրելու համար կազմուած ցանձնախումբը պէտք է իբրեւ հայեցակէտ դնէ իրեն, գոհացնելու Հայ ազգին արդար եւ համեստ պահանջները:

Աղջարեւ յիշեալ ցանձնախմբի գործը անապատելի կերպով կը դիւրինայ եւ կարծութեամբն շուտ կը հասնի իւր նպատակին, եթէ փոխանակ հետազօտելու օտար ցեղե-

րու քանակն եւ Թիւն Հայաստանի այլ եւ այլ գաւառներու մէջ, Աղեքսանդրի օրինակին հետեւէր, եւ բազմակնիւ ցեղերու հարցն մէկ հարուածով լուծէր, հիմնուելով պարզագոյն սկզբունքի մը վրայ, « Օտարներն դուրս Հայաստանէն »: Մեր յարգելի եւ ճշմարտասէր դատաւորներն եւ իրաւաբաններն, հակասած կ'ըլլան մեր առաջարկին, եթէ գողեր, աւազակներ, մարդասպաններ. մէկ խօսքով Թուրքերն մտնեն Հայոց տներն եւ գրաւեն անոնց ստացութեաններն: Ինչպէս անդրժողի է ամուստի իրաւունքները, նոյն համեմատութեամբ կ'իմացուի եւ ամբողջ Ազգի մը: Մեր ասածն համաձայն է դաշնակից ազգերու դրամ սկզբունքներուն, որով վարուեցաւ կեդրոնական կայսերութեանց հետ իրենց վերջական հաշիւը մաքրելու մէջ: Ամեն տեղ ազգութեանց իրաւունքն յաղթանակեց. օտար երկարատեւ տիրապետութիւնն բանի տեղ չդրուեցաւ, եւ դիմեցին անխնայ սրագործութեանց, փոքր եւ ճնշեալ ազգերուն վերադարձնելու իրենց ազատութիւնն եւ անկախութիւնն: Հայերն եւ Հայաստանն ինչո՞ւ բացառութիւն պիտի կազմեն դաշնակիցներու դրամ եւ ընդունած եւ գործարարած սկզբունքներէն: Իրաւունքի եւ արդարութեան յաղթանակն, Թող ծիծաղի եւ մեզ, ինչպէս մեր բաղդակից Լեհաստանի սահմաններու մէջ: Այս համեմատութիւնը երկու ազգերու միջեւ, իրենք եւրոպացիներն բազմիցս շեշտած են: Տուէք ուրեմն մեզի ալ վայելել Բարբարոսներու դէմ տարած յաղթութեան պտուղն՝ Ազատութիւն եւ խաղաղութիւն: Հայաստանն ոչ ազատութիւն եւ ոչ խաղաղութիւն կրնայ ունենալ, քանի որ կը մնայ շրջապատուած Մոնղոլ Սեւեւրեան գազանախտ ցեղերէն:

1. Հին Հայաստանի սահմաններն որոշելու համար հարկ չկայ նոր ուսումնասիրութիւններ ընկելու Միտիթարեանց կրկին Միարանութիւններն իրենց հմուտ միանձանց անխնշ աշխատութեամբ, մանրակրկիտ ուսումնասիրութեամբ ճշգրտել են եւ ըստ այնմ զրամ են իրենց պատմութիւններն եւ զօգրած աշխատանքային տախտակներն: Անուանի կիպերոս իւր Հին Հայաստանի աշխարհ-

հայոց տախտակն արդէն յօրինած, հարկ համարել էր, վերապատգեւ եւ հաւաստել իւր աշխատութիւնն, ինչպէս կը պահանջէր գերմանական խոտապահանջ ոճն ի դիտութեան, զիմեով Հ. Ալեքանին, համեմատելով վերջնայն յօրինած ցարտէպին հետ եւ շատ տեղեր ուղղելով տկամայ վրիպակներն, որոնք ներքին են օտար ուսումնասիրողներուն:

Ատոնց ներկայութիւնն մշտական սպառնալիք մ'է Հայ ժողովրդի խաղաղ զարգացման եւ ազգային միութեան:

Մուսուլման տարրն, պէտք է տրամաբար նօթէն դատարկուի Հայաստանէն, որպէս զի ժամանակով անոնց բարբարոսութիւնն ներէն ազատելու համար, օտար երկիրներ գաղթող Հայերն կարենան հանգիստ ստով դառնալ իրենց բնաշխարհը, թափուր վառարանները շէնցընեն. այն ատեն այլ եւս մեծամասնութեան հարցը ինքնիքին կը լուծուի, որոյ վրայ կը պնդեն մեր ջարդարար թուրքերն եւ թաւաճարները: Հայերիս բնական կայի չէ թուրք-թաւաճար տարրի ներկայութիւնն եւ դրկիցութիւնն. անոնց ոչ միայն Հայոց, այլ ամենայն քաղաքականացած ազգերուն պատուհաս եղած են: Այս բանս անշուշտ մեզէն աւելի լաւ հասկացան թուրք պատուիրակներն, խաղաղութեան ժողովի նախագահի կէսմանսոյի քաղաքավարի մերժողական պատասխանէն: Թող երթան մեզէն այդ բարբարոսներն իրենց բնիկ հայրենիքն, Հայաստանէն աւելի բեղմնաւոր հողեր եւ բարեխառն կլիմաներ ունին: Տուրքիներու եւ թիմուրիներու բարգաւաճ ժառանգութիւնն իրենցն է: Սմիլանդի մէջ կը գտնեն իրենց հասնարի գրուս գործոցներն եւ «քաղաքակրթութիւն»ը. իրենց հայրենիքէն դուրս եղած են գիշատիչ գազաններ, մահ եւ աւեր ցանելով իրենց անցած ճանապարհներով:

*
*

Հին ազգերէն կը մնան Հայաստանին դրացի Բոյնն, Ասորին, Քուրդն եւ Վրացին: Ներկայ պարագաներու շնորհիւ, Հայն եւ Բոյնն զիրար հասկացան, արդէն միմեանց համերաշխութեան ձեռն տուած են, նոր դարաշրջան մը պիտի բացուի երկու ազգերու համար, եթէ յաջողին իրենց դարաւոր թշնամոյ ձեռքէն կորզել իւրաքանչիւրն իրենց պատմական հայրենիքն: Մեծ քաղաքագետի՝ Վենիսեղոսի ջանքերով, Բոյնսուրու բարեացակամ զիջումն Տրապիզոնի

կցմանը Նոր Հայաստանի հետ, կարելի է համարել դաշնակցութեան մը նախադրուներն, հասարակաց թշնամոյն դէմ, եւ գրաւական մը խաղաղ կենակցութեան երկու ազգերու միջեւ:

Ասորւոց կողմնէն մենք շուտով համաձայնութեան կրնայինք գալ, եթէ երջանկին Գաղղիա իւր ասպետական հօգը ձեռք դրած չլլար Ասորիքի վրայ, իրաւունքով մը որ հազիւ երկուսասներորդ դարէն կը սկսի, եւ որոյ մէջ մեծ դեր խաղացեր են Հայերն, ի նպաստ *փրանկ ազգին*: Նա լնասմակայի մը արժանաւոր նախանձախնդրութեամբ կը պաշտպանէ այդ անլեզու որբին, օր մ'ալ որդեգրելու հաւատքով: Սակայն Հայկական Միջագետք եթէ անջատուի մայր երկրէն, կը ցանկայինք գիտենալ վիղանեան վարդապետութեան որ յօռուածագին պիտի համապատասխանէ՝ որպէս զի գայթակցութեան պատճառները բարձուին, եւ հասկանալ ազգեր Մարգարէի խօսքերու ոյժն թէ՛ «գայլք եւ գառնք ի միասին Տարաւ կենցին, եւ առեծն իրրեւ զեզն» յարդ կերցէ »:

Ապա կու գան Քուրդերն, որոնք ինն Մարաց ազգէն մնացած են: Հակառակ աւրեւմտեան ճանապարհորդներու կարծեաց, մենք պատրաստ ենք պնդելու, թէ Հայաստանի մէջ բնակող Քուրդերը 50% Հայ ծագումն ունին եւ հայ եղած են ի բնէ, նաեւ քրիստոնեայ մինչեւ խաչակիրներու դարաշրջանին: Ներսէս Շնորհալոյ ժամանակ ինն հեթանոսութեան մնացորդներն անգամ դարձի եկան: Նոքա Սեւեզեան թաւաճարներու հարստահարութեանց ներդրութենէն եւ *եթաղանի* երկիւղէն մահմետականացած են: Մինչեւ 1840 թուականներուն Հայոց հետ սերտ բարեկամութեամբ ապրած են եւ նոյն թշնամութեամբ ոգեւորած դէպ ի տիրապետող թուրքերն: Հայոց զարթոնումն բաժնեց զիրենք, եւ թուրքերն կրօնական մոլեռանդութիւնը արժարժեղով հետզհետէ ստուլութիւն եւ թշնամութիւն սերմանեցին թէ կրօնական եւ թէ ցեղական ուղղութեամբ, մինչեւ որ Կարսի Սուլթանն կազմակերպեց Համիտի գունդերն

որոնք կոյր գործիչը դարձան Օսման կառավարութեան ձեռքը Հայոց ջարդերու ժամանակ փոխանակ այժմէն այդ կիսավայրենի ցեղերուն յատկացնելու Հայաստանի լսագոյն գաւառամասերն, լսագոյն է արդէն ընդունուած եւ խաղաղութեան դաշնագրի մէջ մտած սկզբունքին համեմատ եմծարկել այդ Քրդերն 15 տարով Հայկական իշխանութեան՝ ժամանակս լրանալէն յետոյ (եթէ ընդունակ գտնուին) ժողովրդական քուէարկութեամբ որոշեն իրենց վիճակը, կամ իբրեւ հայ ծագումով միանան Հայոց ազգի հետ, եւ կամ ի հաւկառակ դէպս Հայկական կառավարութեան միջոցներով խաղաղ տեղահանութեամբ տեղափոխել իրենց հին Մարաց երկիրներն, ուր ոչ նուազ գեղեցիկ արօտներ կան իրենց հօտերուն՝ քան Հայաստանի երկրքի տակ։

Թէ Քրդերն ազգային գիտակցութիւն չունին, Թէ Հայերիս չափ կը սիրեն իրենց հայրենիքը եւ կ'ոգեւորուին իրենց անցեալ պատմութեամբ, գրականութեամբ, գեղեցիկ դպրութեամբ, Թէ իրենց երկինքն եւ մուսայք ներշնչեր են երգել իրենց լեռներն ու դաշտերն, ծաղիկներն, հազարաւոր աղբիւրներն եւ գետերն, Թող Հայերիս նման գնան վերաշինելու իրենց նախնեաց յիշատակները, Թող ձգտին եթէ ի վիճակի են կազմելու վարչական մարմին մը կառավարելու իրենց սեփական երկիրն։ Ո՞վ Քրդեր, պահանջեցէք ձեր Մարաստանն, եթէ պէտք ունենաք լուսաւորութեան, մենք ձեզի կը դրկենք լուսաւորիչը, մի նոր Մեսրոպ։

«գիտե՞ա՞րու՞՞՞ կողմանս Մարացը... յարդարեւ եւ զձեր հարուստ մտացն (?) ծնունդս, պարզախօս, հետեորաբանս... կացուցանել»։ Քրդերն պէտք է յիշեն որ համաշունչ խորհրդով Թուրքերու հետ կազմակերպեցին Հայոց ջարդերը, որով Նախագահ Կլէմանսոյի այրող պատախաճը զանոնք ալ ի միասին դատապարտած է բարոյական մահուան։

Քուրդերէն աւելի անհանդուրժելի են մեզ թաժար-Պարսիկներն (այսպէս կը կոչենք Շիւա աղանդին պատկանելուն համար)։ Նոքա երիտասարդ կամ Համախառնական

կուսակցութեան պատկանող Թուրքերու դրդմամբ հետախուստ են «Ստրպատական Հասարակապետութիւն» մը կազմելու, մուսուլման ցեղերն իրարու հետ կապելու համար։ Այս նպատակով կը պահանջեն միացնել իրենց հետ Այրարատեան աշխարհի լսագոյն գաւառներէն մին՝ հին հայկական Սիւնիքը։ Բանականութիւնը չէ որ կը գործէ այդ սնկըքոր ամբոխի մէջ, այլ անասնական բիրտ ոյժն, որով կը համարին Թէ երկիւղով կրնան համոզել զհայերն հրաժարելու իրենց արդար պահանջներէն։ Զենք ուրանար Թուրքի սպառնալիքն, սակայն այդ գազանը պէտք է փակել գաւառի մէջ եւ կամ ճիւղաններն եւ վարազները քաշելով խելքի բերել եւ անխոս դարձնել։

Թող յիշեն Թաժար-պարսիկներն ալ որք ոչ նուազ կերպով Թշնամի եւ վնասակար համդիւսացան դաշնակիցներուն։ Հաւատարմութեամբ եղան նախ առ իրենց նախկին Ռուս կառավարութիւնն, երկրորդ դաւաճանեցին իրենց դրացի Հայերուն, որոց հետ դաշնադրած էին համերաշխ ապրիլ եւ յարգել փոխադարձաբար ազգային ազատութիւնն, երրորդ մասնեցին զիովկաս Թուրք-Գերման հրոսակներուն, ծրագրեցին ջարդել զՀայերն, եւ մասնակի կերպով ալ յաջողեցան, որպէս զի Թուրք-Գերման բանակներուն համբայ բանան հաղորդակցութիւն հաստատելու Համբուրգ, Թիֆլիզ եւ Թէհրան գծով մը։ Եթէ իրենց դժուարին ծրագրի մէջ չյաջողեցան, այն եղաւ շնորհիւ Հայ ժողովրդի Պետերու խելացի եւ կանխատես քաղաքականութեան, Հայ ժողովրդի եւ բանակի դիւցազնական դիմադրութեան եւ անոր անպարտելի զօրավարներուն հանճարով։ Ուրեմն հաւատա՞նք, Թէ խաղաղութեան ժողովն զրկէ զՀայերն իրենց արեան գնով պաշտպանած երկիրներէն, վարձատրելու հաւատարմութեւ Թուրքին հաւատար բարբարոս Թաժարներն։ Մուսցութեան պիտի տրուին անոնց ձեռքով գործուած ոճիրներն, աւերուած գիւղերն, քանդուած քաղաքները եւ նոյն իսկ զինադաճեալ յետոյ դաւաճանութեամբ հրդեհուած Շուշին,

խողխողուած հազարաւոր ծերեր, կանայք եւ մանկտիւն, խաղաղ քնակիչներն: Խաղաղութեան վեհաժողովի բուն նպատակը չէ՞ ապահովել աշխարհիս երկար եւ արդար խաղաղութիւնը: Այդ սուրբ նպատակին հասնելու համար բաւական չէ միայն ծեղ եւրոպայի մասին միայն, այլ պէտք է մտածեն նաեւ յառաջաւոր Ասիան, Հայաստանի ապագան ապահովեն, ուր շատ վնասակար եւ օտարամիտ ցեղեր միշտ կրուի առիթ պիտի տան, լաւագոյն է որ եւ իցէ զնով դատարկել Հայաստանի հիւսիս – արեւելեան գաւառներն յետադէմ թանկանելէն, որոց բուն հայրենիքն է կասպից ծովի միւս ափերն եւ կովկասեան Սարերէն անդին անսահման անապատները: Եւ կամ Արբաւտական աշխարհը երասիի միւս ափին, Լէնքերանէն սկսած մինչեւ Աստապատ եւ դեռ աւելի վեր կը գտնան առաստապէս ինչ որ պիտի թողնեն կովկասի մէջ, ուր կան աւելի բարեբեր երկիրներ եւ հարուստ հանքեր: Իրենց բուն հայրենիքն պէտք ունի իւր անմահ զարգացած գաւառներուն:

Կը մնայ մեզի յիշատակել համառօտիւ նոյն սահմաններու մասին եղած տարածայնութիւնը մեր դարաւոր դրացի, երբեմն դաշնակից, երբեմն գծտեալ բարեկամներու, վրացի ազգի հետ, թէպէտ ի սկզբանէ որոշ եղած են մեր երկու ազգերու միջի սահմաններն, ինչպէս կը հաւաստեն Յոյն եւ Հայ պատմագիրներն եւ աշխարհագիրներն, երբ երկու ազգերն ալ յոյն էին եւ ունէին իրենց սեփական զգաւորութիւն եւ թագաւորութիւն, սակայն եօններորդ դարէն երբ բազմատունեաց իշխաններէն մին Տայոց աշխարհէն տարածեց իւր իշխանութիւնը վրաստանի վրայ եւ հաստատեց իր թագաւորական իշխանութիւնը, այնուհետեւ սահմաններն սկսան խախտիլ, մասնաւոր երբ ինկաւ Անույ թագաւորութիւնը, Հայերն ստուար բազմութեամբ գաղթեցին վրաստան եւ շէնցուցին գիւղեր եւ քաղաքներ, դրամով եւ մարդով ուժեղացուցին վրաց թագաւորութիւնը: ԺԲ. դարուն երկու Հայ զօրավարներն Զաքարէ եւ

Իւսնէ Սպասալարներն թամար թագուհոյ տիրապետութիւնը հասուցին մինչեւ ի Տրապիզոն եւ մինչեւ Երասխայ ափերն Ալբանիոյ տեան աշխարհի վրայ:

Ահա ներկայ ժամանակիս սահմաններ որոշելու վէճին մէջ, Վրացիք իրենց պատմութեան փայլուն ժամանակի տուեալներու վրայ յեցած, Հայոց վստիմի Գուգարք, Տաշիրք եւ Տայոց աշխարհներու գաւառամասեր իրենց կը վերագրեն եւ պատրաստ են արին թափելու՝ գրաւելու համար զանոնք: Ահա համարեմ խաղաղութեան սիրոյ համար, երկրորդական կէտերու նկատմամբ կարելի է երկուստեք համախոհութեամբ եւ կարելի եղածին չափ զիջումներով վերահաստատել հին սահմաններն եւ նորոգել դրացիական բարեացակամ յարաբերութիւնները: Երկու քրիստոնէայ ազգերու շահն կը պահանջէ սերտիւ միանալ, *մուսուլման տարրին* դիմադրելու համար, որ եմէ մեր վրացի եղբայրներն լաւ մտածեն հաւասարապէս մշտական վտանգ կը սպառնան թէ մեզ եւ թէ իրենց եւս առաւել: մի գուցէ մեզ վրաստելով, ինկնան իրենց նոյն ստրկական վիճակի մէջ, որոյ տխուր նկարագրութիւնն ըրած է Շարտէն վրաստանէն անցած ժամանակ: Զանազան պատմութեան տուած օգտակար դասերէն օգտուել յարգարելով մեր ներկայ բարորութիւնն: Եզրափակելով ցայս վայր գրածսիս, չենք համարիր նոր բան գրած ըլլալ, այլ ուզեցինք արտայայտել մեր ցանկութիւնն առանձնապէս Հայկական նոր Պատուիրականութեան, որ ինչպէս ըրած է, աւելի կուրով շարունակէ պիտի վեհաժողովի առաջ՝ երկու բանի անհրաժեշտութիւնն, ա. Պահպանել Հին Հայաստանի սահմաններն իրենց ամբողջութեան մէջ, որով կիսավերջնի գաղանթամիտ տարրերն զգաւոր սօրնաց խտրութեամբ, Հայկական ընկերաբարոյ կառավարութեան ձեռքով, յանձն առնելով յարգել անոնց ցեղական եւ կրօնական ներքին ազատութիւնն, բ. խաղաղութեան վեհաժողովն արտօնէ Հայաստանին ժամանակակերպապէս հովանաւորող Տէրութեան, մեզի ծանօթ օտար տարրերը, ու

րոնք քաղաքակրթութեան խալաւ անընդունակ են, քանի որ միւսուլման մասն, արտաքսելու խաղաղ միջոցներով Հայաստանի սահմաններէն դուրս: Այս է իրաւունքի եւ արդարութեան ծայրը:

Մեր նախընտաց յօդուածի մէջ, օրինակ բերինք զՍպանիան, որ մինչեւ զԱրաբներն

չարտաքսեց իւր սահմաններէն դուրս, չգտաւ իւր ներքին շինութիւնն եւ խաղաղութիւնը, որով եւ հասաւ իւր փառաց գազանանկէտին, հաստատելով իւր գեղիշխանութիւնը Հին եւ Նոր աշխարհի վրայ: Արեւը իւր տէրութեան մէջ չէր մտնէր:

ՄԵԼՈՒ ՇԻՐԱԿԱՑ



Զ Յ Ր Ա Վ Ա Ր Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ

ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ պատմութեան մէջ՝ երբ մեր Մայր Հայրենիքի թալկահար պատկերը աւերակներու կոյտերէն յարութիւն կ'առնէ դէպի Նոր կեանք մը, գլխաւոր գործիչներուն շարքին մէջ՝ որոնք կրցան մեր Երկրին ազատութեան մեծ գործին իրենց զօրաւոր աջակցութիւնը տալ, կրնանք յիշել պարծանքով Զօր. Անդրանիկի փառազարդ անունը:

Ամենէն աւելի ժողովրդականութիւն վառելիք դէմք մը՝ որ իր ժողովուրդէն բուրովին սիրուած, գրեթէ պաշտուած է... վասն զի իր բովանդակ կեանքը նուիրեց Հայ ժողովուրդին պաշտպանութեան, իր բոլոր կեանքն և հոգին ձօնեց մեր Հայաստանի անկախութեան գործին, ինքզինքն ողջակէզ դնելով Հայրենիքի բազնին վրայ՝ ուխտելով մինչև ցմահ կոտիլ անդադար՝ ազատութիւնը ձեռք ձգելու համար: Իր կենսագրութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ անուր հերոսութիւններու շարք մը, հիասթափ դիցազնութիւններու անհատնում դրուագ մը:

Իր ամբողջ անձին մէջ կը ներկայացնէ ամբողջ հայ ազգային յոյսորտանքի և ըմբոստացումի ոգին և Հայրենիքի սրբազան սէրը: Ծնած է ի Շապին—Փարահիսար, Ծի սարի առաջ՝ աշխատաւորներու ընտանիքէ մը: Ատաղձագործութիւն էր իր արուեստը. իր դիրքը բարւոյն էր հա-

մար կ'երթայ Կ. Պօլիս, ուր զանազան յեղափոխականներու ծրագրերն էր տեսնելով, Հայրենիքը փրկելու համար՝ անոնց շարքերուն մէջ կը մտնէ: Բնութեամբ աշխոյժ և գործունեայ՝ իր ընկերներէն կը սիրուի և իր կազմակերպող ոյժ մը երևան կու գայ: Մեծամեծ օգնութիւն և իր կարող աջակցութիւնը տուաւ՝ 1896ի Կ. Պօլսոյ քստմնասարսուռ ջարդերու ժամանակ. յետոյ կ'անցնի Ռուսաստան և ապա կ'ովկաս՝ որ յեղափոխականութիւնը մեծամեծ քայլեր առած և կազմակերպուած էր: Իր ծրագրերուն մէջ էր Հայաստանի ապստամբութիւնը Թրքաստանի դէմ. որուն համար պէտք էր անձնապէս տեղւոյն վրայ գտնուիլ. ուստի իր հերոսներու խումբով կը մտնէ Թրքահայաստանի սահմաններուն մէջ և իր գործունէութեան կեդրոնը կ'որոշէ քաջասրտութեան և հայրենասիրութեան օրբան Տարոն գաւառին մէջ... Չորս տարիներու (1897—1901) շրջանին մէջ՝ անհամար պատերազմներ մղեց իր փոքրաթիւ խումբով բազմաթիւ կանոնաւոր թուրք զինուորներու դէմ՝ Մուշի և Բաղէշի սահմաններուն մէջ: Այլ ևս այդ դիւցազնական մարտերու և սխրագործութիւններու լուրը հասած էր ամեն հայու սրտին... ապստամբութեան գաղափարը ի սէր հայրենեաց շատ կուսակիցներ կը ժողվէր Անդրանիկի խմբակը ստուա-